



ԱՅ ԷՖ Ի ԷՍ-Ի ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հրազդանի քաղաքապետի ընտրություններ

Փետրվարի 12, 2012 թ.

2012 թ.-ի փետրվարի 12-ին ԱՅ ԷՖ Ի ԷՍ-Հայաստանն իրականացրել է ընտրական դիտորդություն Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում: ԱՅ ԷՖ Ի ԷՍ-ի ներկայացուցիչներն առավոտյան ժամը 8:00-ին ներկա էին հինգ տեղամասային կենտրոնների բացմանը: Այդ օրը նրանք դիտարկել են քվեարկության ընթացքը ընդհանուր առմամբ 7 տեղամասում և քվեարկության գործընթացի ավարտից հետո (երեկոյան ժամը 8:00-ին) ներկա են գտնվել ձայների հաշվարկին 5 տեղամասում:

ԱՅ ԷՖ Ի ԷՍ-ի ընտրական դիտորդությունը պաշտոնապես արտոնվել է ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հանձինս ԿԸՀ նախագահ Տիգրան Մուկուչյանի: ԱՅ ԷՖ Ի ԷՍ-ի տնօրենը հավատարմագրվել է ուղղակիորեն ԿԸՀ-ի կողմից, իսկ ԱՅ ԷՖ Ի ԷՍ-ի աշխատակազմի անդամները հավատարմագրվել են «Փարոս» ՀԿ-ի միջոցով: ԱՅ ԷՖ Ի ԷՍ-ը շնորհակալ է ԿԸՀ-ին և ԿԸՀ նախագահին արագ արձագանքելու և արտոնություն տալու դիտարկել այս կարևոր ընտրությունները, ինչպես նաև շնորհակալություն է հայտնում «Փարոս»-ին ընտրությունների դիտորդությունը հնարավոր դարձնելու համար:

Այս դիտորդությունը հնարավորություն է տվել ԱՅ ԷՖ Ի ԷՍ-ին գնահատելու Տեղամասային ընտրական հանձնաժողովների ունակությունները կարևոր շրջանում՝ գալիք ԱԺ ընտրություններին ընդառաջ:

Քսանյոթ ընտրական տեղամաս սպասարկել է Հրազդանի քվեարկությունը: ԱՅ ԷՖ Ի ԷՍ-Հայաստանը ներկայություն է ապահովել հետևյալ տեղամասերում՝ 25/1, 25/4, 25/13, 25/5, 25/7, 25/2 և 25/11: Այցելած տեղամասերը որոշվել են պատահականության սկզբունքով՝ մեծացնելու դիտորդության որակը և շառավիղը:

ԱՅ ԷՖ Ի ԷՍ-ը մշակել էր քվեարկության հարցաթերթիկ: Հարցաթերթիկները կազմվել էին ըստ ընտրական վարչարարության թեմաների և բաղկացած էին 73 հարցերից հետևյալ կարգերում՝

1. Տեղամասային կենտրոնի բացում
2. Տեղամասային կենտրոնի շրջապատող միջավայր
3. Քվեարկության սենյակի պայմանները
4. Հաշմանդամ ընտրողների հասանելիությունը



5. Քվեարկության ընթացակարգեր
6. ՏԸՀ-ի ընդհանուր կատարողականը
7. Փակման ընթացակարգը և հաշվարկը

Այս հաշվետվությունը հիմնված է ԱՅ ԷՖ Ի ԷՍ-ի ներկայացուցիչների անմիջական վկայության վրա:

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՍՓՈՓԱԳԻՐ

ԱՅ ԷՖ Ի ԷՍ-ի այցելած 5 տեղամասերում դիտարկվել է հետևյալը՝

- Ընդհանուր առմամբ ՏԸՀ վարչական գործառությունը լավ կազմակերպված էր, չնայած առկա էին որոշ խնդիրներ ձայների հաշվարկի մեջ տեղամասերի փակումից հետո (երեկոյան ժամը 8:00-ին):
- ՏԸՀ-ն արդյունավետ սպասարկում էր ընտրողների մեծ ալիքները, որոնք օրվա ընթացքում ժամանում էին ավտոբուսներով:
- Աշխատանքային պայմանները տեղամասերում զիջում էին ընդունված նորմերին, քանի որ քվեարկության օրը օդի ջերմաստիճանը ցածր էր:
- Տեղամասերի մեծ մասը հարմարեցված չէր հաշմանդամ ընտրողների համար (բացառությամբ 25/11 տեղամասի, որն ուներ թեքահարթակ):
- Մարդիկ տեղամասերում ոչ միշտ էին կրում ինքնություն հաստատող փաստաթղթերը, ինչը դժվարեցնում էր հասկանալ, թե ով է հանձնաժողովի անդամ, վստահված անձ կամ դիտորդ:
- Քվեարկության սենյակներից մեկում կար ներկա գտնվելու իրավունք չունեցող անձ: Նկատվել է մեկից ավել վստահված անձանց ներկայությունն քվեարկության սենյակում:
- Հանձնաժողովի անդամների, վստահված անձանց և դիտորդների ընտրական ընթացակարգի վերաբերյալ թերի իմացությունը վեճեր էր առաջացնում ընթացակարգի տարբեր կետերի շուրջ:
- Լրագրողների ոչ պատշաճ վարքագծի և ընտրական ընթացակարգի վերաբերյալ թերի իմացության արդյունքում միջամտություն էր կատարվում ՏԸՀ աշխատանքում:



Լրագրողների կողմից քվեարկության ընթացակարգի սխալ մեկնաբանությունը բերում էր ապատեղեկատվության:

- Որոշ դիտորդներ ակնհայտորեն աջակցություն էին ցուցաբերում ընդդիմադիր թեկնածուին:
- Ոստիկանության ներկայությունը տեղամասի շուրջ պատշաճ և արհեստավարժ էր:
- ՏՀՀ-ի կողմից ձայների հաշվարկը թերի էր կազմակերպված առնվազն մեկ տեղամասում, ինչն ուշացնում էր հաշվարկը:

ԲԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

- Դիտարկված բոլոր 5 տեղամասերում բացումը կատարվել է ժամանակին և պատշաճ կերպով: Հանձնաժողովները լիովին պատրաստ են եղել ընդունել ընտրողներին, որոնք սկսել են ժամանել առավոտյան ժամը 8:00-ից հետո:
- Քվեատուփի կնիքը բացվել է ժամանակին, թափանցիկ եղանակով և հանձնաժողովի բոլոր անդամներին հիշեցրել են իրենց օրվա պարտականությունները:
- Հավատարմագրված վստահված անձանց, դիտորդներին և լրագրողներին տրամադրվել է բավարար տարածք իրենց պարտականությունները կատարելու համար:
- Թեկնածուների վստահված անձանց առավոտյան տեղավորել են ՏՀՀ հանձնաժողովի այն անդամների միջև, որոնք իրականացնում են ընտրողների գրանցումը և տրամադրում են քվեաթերթիկները, ինչպես նախատեսված է նոր ընտրական օրենսգրքով:
- Քվեախցիկները տեղադրված են եղել այնպես, որ ընտրողների ընտրության գաղտնիությունն ապահովված լինի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ



- ՏՀՀ-ները հիմնականում բավարար էին սպասարկում ժամանող ընտրողների խմբերին՝ արագ անցկացնելով բոլոր ընթացակարգերով: Տեղամաս 25/4-ում Սասուն Միքայելյանի վստահված անձն օգնել է հանձնաժողովի անդամին, որը խնդիր է ունեցել ընտրողներին գրանցելու հետ կապված: Վստահված անձը բարձր կարգացել է ընտրողի անձնագրային տվյալները, ինչը պետք է աներ հանձնաժողովի անդամը՝ միաժամանակ ստուգելով ընտրողին ընտրողների ցուցակում: Միքայելյանի վստահված անձը նախկինում եղել էր ԿՀՀ հանձնաժողովի անդամ:
- Որոշ տարեց ընտրողների օգնում էին երիտասարդներ գրացվելու, քվեաթերթիկը լրացնելու և այն ծրարի մեջ դնելու հարցում: Բոլոր այդ տարեցները, ըստ երևույթի, ունեին այդ օգնության կարիքը:
- Ոստիկանությունը ապահովել է պատշաճ ներկայություն քվեարկության սենյակներից դուրս՝ պահպանելով ողջամիտ անվտանգություն և չմիջամտելով քվեարկության գործընթացին:
- ՏՀՀ անդամները պատշաճ կերպով միմյանց փոխարինել են համապատասխան դերերում, ինչպես պահանջված է ընտրական օրենսգրքով, բացառությամբ 25/1 տեղամասի, որտեղ ՏՀՀ նախագահը պատշաճ ռոտացիայի չէր ենթարկում հանձնաժողովի անդամներին:
- Տեղամասեր 25/1-ում և 25/5-ում նկատվել է 15-ից ավել ընտրողների կուտակում: Վստահված անձի պահանջով ՏՀՀ նախագահը խնդրել է ոստիկանությանը սահմանափակել մարդկանց հոսքը տեղամաս:
- Տեղամաս 25/1-ում լրագրողը խանգարել է ՏՀՀ նախագահի աշխատանքը, ով թեժ ժամին քվեատուփի մոտ փոխարինում էր ժամանակավոր բացակայող հանձնաժողովի անդամին (նա գնացել էր քվեարկելու): Լրագրողները նկատվել են սաղորիչ գործողություններ կատարելիս՝ երբեմն գոռալով հանձնաժողովի անդամների վրա:
- Ընտրողների իրազեկության պակասի արդյունքում երբեմն տեղի էր ունենում «բաց քվեարկություն»՝ քվեաթերթիկը դնելով ծրարի մեջ առանց այն պատշաճ փակելու:
- Թեկնածուների վստահված անձինք երբեմն ստանձնում էին հանձնաժողովի անդամների պարտականությունները և ուղղորդում էին ընտրողներին, ՏՀՀ անդամներին և դիտորդներին:



ՓԱԿՈՒՄԸ ԵՎ ՁԱՅՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ

- Տեղամաս 25/4-ը լավ կազմակերված չի եղել սկսելու քվեների հաշվարկը, մասամբ որովհետև առնվազն երկու հանձնաժողովի անդամ հրաժարվել են մասնակցել և որովհետև հանձնաժողովի նախագահը չէր կարողանում կառավարել գործընթացը՝ իր գործընկերների ջանքերը կենտրոնացնելու հաշվարկի վրա:
- Տեղամաս 25/4-ում Միքայելյանի վստահված անձին կանչել են օգնելու կազմակերպել քվեների հաշվարկը և հաստատելու օգտագործված և չօգտագործված քվեաթերթիկները:
- Տեղամաս 25/4-ի փակումից երկու ժամ անց դեռ ոչ մի քվեաթերթիկ հաշված չէր: Ձայների հաշվարկը ավարտվել է գիշերվա ժամը 2:00-ին՝ փետրվարի 13-ին:

ԴԻՏՈՐԴՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՄՇԱԿՎԱԾ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Բոլոր ՏՀՀ անդամները պետք է ուսուցանվեն և պատրաստվեն օրենքով սահմանված իրենց պարտականությունները տեղամասում կատարելու համար:
- Լրագրողները պետք է լինեն ավելի լավ վերապատրաստված ընտրությունների ընթացակարգերի վերաբերյալ, որպեսզի չապակողմնորոշեն ընտրողներին և անաչառ լուսաբանեն ընտրությունները: Օրինակ՝ լրագրողներից մեկը հայտարարել է, որ «շարժական քվեատուփերի» բացակայությունը և վատ տեսողությամբ մարդկանց մեծ թվի ներկայությունը տեղամասում հանդիսանում են խախտումներ:
- Տեղամասի պայմանները պետք է բարելավել և ստեղծել պատշաճ ջերմաստիճանի առկայություն:

###